ՀՀ Վայոց ձոր մարզի Եղեգնաձոր քաղաքի
Հովհ. Հովհաննիսյանի անվան թիվ 2 հիմն. դպրոց

Հ Ե Տ Ա Զ Ո Տ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

ԹԵՄԱ՝ Գոյականի ուսուցման մեթոդիկան

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Գայանե Գալուստյան

ԽՈՒՄԲ՝ III

ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Լիլիթ Մարկոսյան

2 0 2 3 թ

Բովանդակություն

Ներածություն……2

Գլուխ I ՝ Խոսքի մասեր: Գոյականը որպես խոսքի մաս……..3

Գլուխ II՝ Գոյականի տեսակները……7

Գլուխ III՝ Գոյականի ձևաբանական առանձնահատկությունները և շարահյուսական դեր…….....10

Եզրակացություն……17

Օգտագործված գրականության ցանկ…….....18

Ներածություն

Այս հետազոտական աշխատանքի թեման գոյականի ուսուցման մեթոդիկան է: Նպատական է ուսումնասիրել և ներկայացնել մեկ ընդհանուր նպատակի ծառայող դասավանդման այնպիսի մեթոդներ, որոնք ավելի հետաքրքիր, մատչելի և ընկալելի կդարձնեն գոյական խոսքի մասին վերաբերող նյութը: Նպատակին հասնելու համար անհրաժեշտ է գոյոկանի ուսուցումն սկսել իմաստային, ձևաբանական ու շարահյուսական կարևոր առանձնահատկությունների ներակայացումից:

Ուսուցման հաջողությունը կախված է *գոյական* խոսքի մասին հատկացված դասաժամերի ճիշտ կազմակերպումից և անցկացումից:

Գոյական խոսքի մասին տրվում է 22 դասժամ, որից ըստ թեմաների՝

1. Գոյականը որպես խոսքի մաս -1 ժ.
2. Հատուկ և հասարակ գոյականներ- 3ժ.
3. Անձնաիշ և իրանիշ գոյականներ -1ժ.
4. Գոյականի թիվը -3ժ.
5. Գոյականի որոշյալ և անորոշ առումները -1ժ.
6. Գոյականի հոլովումը- 12ժ.
7. Կրկնություն -1ժ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՄԱՍՏԸ

առարկա

ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝

թեքվող (թիվ, հոլով, առում)

Գոյականը որպես խոսքի մաս

ՏԵՍԱԿՆԵՐԸ՝

1. հատուկ
2. հասարակ
3. անձնանիշ
4. իրանիշ

ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԴԵՐԸ՝

1.ենթակա
2.կոչական
3.ստորոգյալի մաս
4.գոյ. և բայ. անդամի լրացում

Գլուխ I ՝ Խոսքի մասեր: Գոյականը որպես խոսքի մաս

Համառոտ գաղափար կտրվի խոսքի մասերի վերաբերյալ:

Բառերն ըստ իրենց արտահայտած իմաստի տարբեր են լինում: Կան բառեր, որոնք ցույց են տալիս առարկաներ, որոշ բառեր՝ գործողություն, հատկություն, քանակ և այլն: Լեզվի բոլոր բառերն ըստ իրենց արտահայտած իմաստների բաժանվում են տարբեր խմբերի կամ տեսակների. Առարկա ցույց տվող բառերը մի խումբ են կազմում, առարկայի հատկություն ցույց տվող բառերը՝ մի այլ խումբ և այլն: Բառերի այդ տարբեր խմբերը կամ տեսակները կոչվում են խոսքի մասեր:

Հայերենում կա 10 խոսքի մաս ՝ գոյական անուն, ածական անուն, թվական անուն, դերանուն, բայ մակբայ, կապ, շաղկապ, վերաբերական, ձայնարկություն:

Այնուհետև կհանձնարարվի տեքստ, որից աշակերտները m-ձև աղյուսակով դուրս կգրեն առարկա, առարկայի հատկություն և գործողություն ցույց տվող բառերը:

Գլուխ I.I ՝ Գոյականը որպես խոսքի մաս

Սկզբում կտրվի գոյականի սահմանումը: Գոյական եզրույթը գոյ արմատից է, որը նշանակում է<< կա, է, գոյություն ունի>>:

Գոյականը ցույց է տալիս առարկա, կամ առարկայացված հասկացություն, որը պատասխանում է ո՞վ կամ ի՞նչ հարցերին:

Առարկան պարզ է. Ինչ գոյություն ունի աշխարհում, տեսանելի է ՝ նյութական իրեր, կենդանիներ, բնության երևույթներ, զգացմունքներ, հարաբերություններ, եղելություններ, գաղափարներ: *Օրինակ՝ պահարան,մարդ, խնդություն, շուն, քաջություն, փորձանք:*

Առարկայացված հասկացություն ցույց տվող գոյականների մեջ են մտնում այն բառերը, որոնք արմատական իմաստով առարկա չեն ցույց տալիս, այլ գործողություն կամ հատկանիշ, բայց ածանցերի միջոցով այդ հասկացությունը առարկայացնում են և դառնում գոյություն ունեցող երևույթներ: Սրանք կոչվում են բայանուն գոյականներ: *Օրինակ՝հարգանք, մեծարանք, երազանք:*

Դասը կանցկացնենք հարցուպատասխանի՝ զրույցի ձևով: Աշակերտներին կտրվեն հարցեր.

_ Կարո՞ղ եք թվարկել գոյականներ, որոնք ցույց են տալիս թռչուներ, կենդանիներ, բնության երևույթներ, տարբեր մասնագիտություն ունեցող մարդիկ:

Օրինակներից հետո ժամանակ առ ժամանկ պետք է կրկնել տալ գոյականի սահմանումը, հետո նորից վեր հիշել սահամնումը, բերել օրինակներ:

Այնուհետև կտրվեն համապատասխան առաջադրանքներ.

Առանձնացնել անձ, կենդանի, իր, բնության երևույթ, զգացմունք, եղելություն ցույց տվող բառերը և ավելացնել ցանկը իրենց իմացած բառերով:

Գոյականի սահամանումը ամրապնդելու համար կարելի է աշակերտներին բաժանել խմբերի և հանձնարարել, թե որ խումբն ավելի շատ առարկա ցույց տվող բառեր կարող է գրել:

Լեզվի մեջ կատարվում է գոյականի հետևյալ բաժանումը՝ անձ և ոչ անձ, վերացական և թանձրացական, շնչավոր և անշունչ, անհոգնական և անեզական, հասարակ և հատուկ: Այս բաժանումից ուշադրություն կդարձնենք երկու բաժանման՝ անձ և ոչ անձ, հասարակ և հատուկ:

ԳՈՅԱԿԱՆԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

ՀԱՍԱՐԱԿ

Բոլորին տրվող մեկ ընդհանուր անուն

քաղաք
գետ
ուսուցիչ

ՀԱՏՈՒԿ

Յուրաքանչյուրին տրված առանձին անուն

Երևան, Գորիս
Գետառ, Որոտան
Հակոբյան, Բարսեղյան

ԱՆՁՆԱՆԻՇ

Մարդ ցույց տվող

Հայկ
ուսուցիչ
պատգամվոր
զինվոր

ԻՐԱՆԻՇ

Իր ցույց տվող

կատու
ծառ
միտք
Եղեգիս

Գլուխ II՝ Գոյականի տեսակները (հատուկ և հասարակ գոյականներ)

Այս թեմայի իմացությունը կարևոր է երկու առումով.

1. Նախ աշակերտները տեսականորեն ճանաչում ու տարբերակում են հատուկ և հասարակ անունները:
2. Այս նյութի լավ իմացությունը աշակերտներին հարկավոր է լինելու հետագա աշխատանքային գործունեության ընթացքում, քանի որ հատուկ անունների գրության կանոնների իմացությունը գործնական նշանակություն և կիրառություն ունի:

Թեման անցնելիս նախ կտրվի սահմանումը:

Միևնույն տեսակի բոլոր առարկներին տրվող ընդհանու անունը կոչվում է հասարակ անուն: *Օրինակ՝ գիրք, հայր, դպրոց, քաղաք, մարդ:*

Միևնույն տեսակի առարկաներից յուրաքանչյուրին տրված առանձին անունը կոչվում է հատուկ անուն: Հատուկ անունները միևնույն տեսակի առարկանները միմյանցից տարբերելու համար են տրվում:

Օր.՝ հասարակ՝ գյուղ, քաղաք, գետ

հատուկ՝ Եղեգիս, Գյումրի, Հրազդան :

Ծագումով հատուկ անունները նախորդում են հասարակ անուններին: Հատուկ անուններ են՝ աշխարհագրական (գետերի, ծովերի, երկրների, լեռների) անունները, մարդկանց անուններն ու ազգանունները, հիմնարկների, կազմակերպությունների անվանումները, գրական, գիտական ստեղծագործությունների անունները, կենդանիներին տրվող անունները:

Աշակերտները կբերեն օրինակներ, այնուհետև կկրկնեն հատուկ և հասարակ գոյականների սահմանումը: Կտրվի առաջադրանք Տ-ձև աղյուսակով խմբավորել հատուկ և հասարակ գոյականները:

Հատուկ անունների ուղղագրությունը

Հատուկ անունները հասարակ անուններից տարբերվում են գրությամբ: Հասարակ գոյականներից տարբերելու համար հատուկ գայականների առաջին տառը գրվում է մեծատառ:

Կազմությամբ հատուկ անունները լինում են պարզ և բաղադրյալ:

Մեկ բառից կազմված հատուկ անունը պարզ է: *Օր.՝ Տիգրան, Նվարդ, Արտաշատ:*
Բաղադրյալ հատուկ անունները մեկից ավելի բառերից կազմված անուններն են: *Օր.՝ Սևանա լիճ, Հայաստանի Հանրապետություն և այլն:*

Աշակերտներին կտրվեն ամրապնդող վարժություններ և խմբային առաջադրանքներ: Դրանք ճիշտ կատարելու համար աշակերտները պետք է լավ սովորեն բաղադրյալ հատուկ անունների գրության կանոնները: Ուսոցման հիմքը տեսական նյութն է, որը տրված է դասագրքում: Դասը լավ յուրացնելու համար կհանձնարարվի կատարել նյութից բխող տրված վարժությունները և առաջադրանքները:

Բաղադրյալ հատուկ անունների ուղղագրությունն ամրապնդելու համար կտրվեն խմբային առաջադրանքներ, դասարանում կլինեն քարտեզներ: Այս առաջադրանքների նպատակը նախ և առաջ հատուկ անունների ուղղագրության ուսուցումն է, ապա նաև՝ միջառարկայական կապը. Աշակերտներից պահանջվում է նաև աշխարհագրության լավ իմացություն:

Կան գոյականներ, համանուններ, որոնք կարող են լինել և՛ հասարակ, և՛ հատուկ անուններ: *Օր.՝ Հասմիկ-հասմիկ, Զեփյուռ-զեփյուռ, <<Պատվի համար>> –պատվի համար և այլն:*

Կարելի է հանձնարարել, որ աշակերտները տանը շարունակեն այս շարքը և կազմեն նախադասություններ, որ բառերը լինեն և՛ հասարակ, և՛ հատուկ գոյականներ;

Գլուխ II. I՝ Անձնանիշ և իրանիշ գոյականներ

Այս թեման այնքան էլ բարդ չէ , ուստի նախ կտրվի սահմանում: Անձերը ցույց են տալիս մարդկանց բնորոշ հատուկ և հասարակ անուններ , պատասխանում են *ո՞վ* հարցին: Մնացածը ոչ անձ ցույց տվող առարկաններ են, պատասխանում են *ի՞նչ հարցին.*

Օր.՝ անձ՝ Հայկ, ուսուցիչ, բանվոր, զինվոր և այլն,

իր՝ ձի, գետ, քաղաք, Մասիս, Արաքս և այլն:

Այնուհետև թեման կանցկացնենք մի քիչ խաղային տարրերով: Նորից կարելի է օգտագործել միջառարկայական կապը և հանձնարարել կենդանաբանության, բուսաբանության դրսևորման օրինակ հանդիսացող համապատասխան վարժություն.

ինչպես՝ տրված իրանիշ գոյականները դասակարգել ըստ իմաստային խմբերի՝ թռչուն, կենդանի, բույս, բանջարեղեն:

Տանը կհանձնարարվի գրել տասական անձնանիշ և իրանիշ գոյականներ և դրանցով կազմել նախադասություններ:

Գլուխ III՝ Գոյականի ձևաբանական առանձնահատկությունները և շարահյուսական դերը

Գլուխ III. I՝ Գոյականի թիվը



Գոյականի թիվը աշակերտներն ուսումասիրել են ցածր դասարաններում, այդ պատճառով էլ թեմային կարելի է անդրադառնալ հարցերի միջոցով և դասը սկսել զրույցի ձևով.

1. թե ինչ գիտեն գոյականի թվի մասին,
2. ինչ է ցույց տալիս եզակի թիվը
3. ինչ է ցույց տալիս հոգնակի թիվը և ինչպես է կազմվում:

Այնուհետև պետք է տրվի գոյականի թվի սահմանումը: Թիվ ասելով հասկանում ենք առարկայի քանակ: Առարկանները կարող են լինել անսահմանափակ , բայց ունեն երկու թիվ՝ եզակի և հոգնակի:

Եզակի թիվը ցույց է տալիս մեկ առարկա, կամ առարկայի տվյալ տեսակն ընդհանրապես; Եզակի թիվը 0 ձև է և հատուկ վերջավորություն չունի:

Հոգնակի թիվը ցույց է տալիս մեկից ավելի միատեսակ առարկաններ: Հոգնակի թիվն ունի քերականական հատուկ վերջավորություններ, դրանք են ՝ *եր, ներ, ք, իկ ,այք*: Բայց հիմնական հոգնակիակերտ մասնիկներն են *եր*-ը և *ներ*-ը:

Միավանկ բառերի հոգնակին կազմվում է *եր* վերջվորությամբ:

Օր.՝ եզ. թիվ - ծառ, տուն, քար,

հոգ. թիվ- ծառեր, տներ, քարեր:

Բազմավանկ բառերի հոգնակին կազմվում է *ներ* վերջավորությամբ:

Օր.՝ եզ. թիվ- հոսանք, տանիք, ելույթ,

հոգ. թիվ- հոսանքներ, տանիքներ, ելույթներ:

Պետք է ավելի ծավալվել և բավական ժամանակ հատկացնել հոգնակի թվի կազմության շեղումներին և նշել, որ կան գոյականներ, որոնց հոգնակի թվի կազմությունը շեղվում է հիշյալ կանոններից և հերթականությամբ պետք է նշել շեղումները.

1. *Մարդ* և *կին* բառերի հոգնակին լինում է *մարդիկ* և *կանայք*,
2. *Բեռ, գառ, դուռ, եզ, թոռ, ծունկ, ձուկ, հարս* և այլն գրաբարում ն-ով վերջացող բառերը կազմվում են ներ-ով:

Բարդ բառերի հոգնակիի կազմությունը պետք է նշել և բերել օրինակներ:

Հոգնակի թվի կազմության իմացությունը ամրապնդելու,հոգնակիակերտ վերջավորությունները զանազանելու համար կարելի է կատարել խմբային աշխատանք: Տալ գոյականներ և հանձնարարել, որ խմբավորեն ըստ հոգնակիակերտ վերջավորությունների:

Դասարանում աշակերտներին կբացատրվի և կբերենք օրինակներ այն գոյականների մասին, որոնց հոգնակին գործածական չէ: Դասարանում կանցկացնենք փոքրիկ մրցույթ, գրատախտակին կգրենք խառը բառեր և կհանձնարարվի, թե ով շուտ կորոշի այն գոյականները, որոնք հոգնակի թվով չեն գործածվում: Կհանձնարարվի տանը գրել այդպիսի գոյականների օրինակներ:

Գոյականի թիվը թեման ամրապնդելու համար կհանձնարարվի առաջադրանքներ.

ա. Տեքստից առանձնացնել հոգնակի թվով գոյականները, և ընդգծել հոգնակիացնող մասնիկները:

բ. Տրված տեքստից արտագրել գոյականները և փոխել թվերը:

գ. Բառարանից ջոկել բարդ բառեր և դարձնել հոգնակի

Գլուխ III. II `Գոյականի առումները

Գոյականի որոշյալ և անորոշ առումները թեման դասավանդելիս կտրվի սահմանումը, այնուհետև կբերենք համապատասխան օրինակներ, կընդգծենք հոդերը,կանրադառնանք *ա,դ,ն* հոդերին: Նախապես գրական ստեղծագործություններից դուրս կբերենք բանաստեղծական հատվածներ, կգտնենք հոդերը և կընդգծենք, իսկ հետո կբացատրվի դրանց դրսևորումները: Այնուհետև կընթերցենք և աշակերտներին կհանձնարարվի որոշել հոդերի տեսակը:

Գրական ստեղծագործությունից դուրս կգրենք մի հատված և կհանձնարարվի Տ-աձև աղյուսակով դուրս գրեն որոշյալ և անորոշ առումով գործածաած բոլոր գոյականները:

Դերանուն թեմայի վերջում նորից կանդրադառնանք հոդերի քննությանը:

Գլուխ III. III՝ Գոյականի հոլովումը

Գոյականի հոլովումը թեմայի դասավանդումը սկսելուց առաջ հոլովմանը հատկացված 12 դասաժամերը կբաշխվեն հետևյալ կերպ `

Ուղղական հոլով 2 ժ.

Սեռական հոլով 2 ժ.

Հայցական հոլով 1ժ.

Տրական հոլով 1ժ.

Բացառական հոլով 1 ժ.

Գործիական հոլով 1ժ.

Ներգոյական հոլով 1ժ.

Կրկնություն 1 ժ.

Ամփոփում և թեմատիկ աշխատանք 2ժ.

Հենց սկզբից կբացատրվի *հոլովում* եզրույթի իմաստը: Հոլովում բառացի նշանակում է առանցքի կամ մի բանի շուրջ պտտում, դիրքի փոփոխում: Գոյականները հոլովական փոփոխությունների են ենթարկվում նախադասություն կազմելու և նախադասության մեջ տարբեր պաշտոններ կատարելու համար:

Գոյականի ուսուցման մեջ առանձնահատուկ կարևորություն և կշիռ ունի հոլովների իմացությունը: Քանզի հոլովների լավ իմացությունը կդառնա այն հիմքը, որով իրենք հաջորդ դասարանում շարահյուսություն բաժնում չեն դժվարանա նախադասության անդամների շարահյուսական դերը՝ պաշտոնները որոշելիս: Կասվի, որ նախադասության մեջ գոյականներն ունեն զանազան պաշտոններ: Հետո կտրվի հոլովման սահմանումը: Աշակերտները պետք է լավ ըմբռնեն հոլովների վերաբերյալ տեսական նյութը, ճիշտ կատարեն վարժություններն ու առաջադրանքները, որպեսզի կարողանան տարբերակել հոլովները և դրանց կիրառություններ:

Հոլովական համակարգը ներկայացնելու համար հենց առաջին դասին գրատախտակին կգրվի հոլովական հարացույցը:
Յուրաքանչյուր հոլովի դիմաց կնշվեն պահանջած հարցերը և հոլովական վերջավորությունները: Այնուհետև կհանձնարարվի աշակերտներին արտագրել դրանք իրենց տետրերում և սովորել:

Հոլովը	**Հոլովական հարցեր**
Ուղղական *(ուղիղ–ական, գործողություն կատարող)*	Ո՞վ, ովքե՞ր, ի՞նչ(ը), ինչե՞ր(ը)
Սեռական *(սեռ-տեսակ,տեղ առարկա որին պատկանում կամ վերաբերում է մի ուրիշ առարկա)*	Ու՞մ, ինչի՞
Տրական *(տուր-ական, որին մի բան տրվում հանգում է)*	Ու՞մ, ինչի՞(ն), ինչի՞ համար, ե՞րբ, որտեղ
Հայցական *(հայց-ական, հայցը-հայցել բայից, խնդրել աղերսել, գործողություն կրող)*	Ու՞մ, ի՞նչ(ը), ո՞ւր, որքա՞ն որքա՞ն ժամանակ, երբ
Բացառական *(բաց-առական, առարկա որից մի բան ի բաց է առնվում, անջատվում, հեռացվում)*	Ումի՞ց, ինչի՞ց, որտեղի՞ց, երբվանի՞ց
Գործիական*(գործ-ի-ական առարկա,որի միջոցով մի բան է արվում)*	Ումո՞վ, ինչո՞վ, որտեղո՞վ, ե՞րբ, որքա՞ն ժամանակով, ինչպե՞ս
Նորգոյական *(ներ-գոյ-ական, առարկա*	Որտե՞ղ, ինչու՞մ (կամ ինչի՞ մեջ), որքա՞ն

որի մեջ, ներսում կատարվում է, ներգոյ նշանակում է ներսում եղածը)	ժամանակում

Հոլով	**Հոլովական վերջավորություն**
Ուղղական	0, ն(ը)
Սեռական	-ի, -ու,-ան,-վա,-ոջ,-ց,-ա,-ո,
Տրական	-ի (ն)
Հայցական	-ը(ն),-ի(ն)
Բացառական	-ից,-ուց
Գործիական	-ով,-բ
Ներգոյական	-ում

Աշակերտները պետք է գիտակցեն, որ հոլովը գոյականի ձևի և բովանդակության միասնությունն է: Յուրաքանչյուր հոլովի բնութագիրը կտրվի ըստ բովանդակության կամ իմաստի, այսինքն կկարևորվի տվյալ հոլովի սահմանումը և կպահանջվի,որ սովորեն և հասկանան, թե ինչ է ցույց տալիս տվյալ հոլովը և ինչպես է կազմվում: Դասագրքում յուրաքանչյուր հոլով սահմանված է իր իմաստային գործառույթին համարժեք:

Այնուհետև առանձին-առանձին կբացատրվի յուրաքանչյուր հոլովի ձևը, կազմությունը: Ապա կբացատրվի յուրաքանչյուրի շարահյուսական կիրառությունը: Հետո կհանձնարարվեն համապատասխան առաջադրանքներ:

Ավելի մանրամասն կանգ կառնվի և կընդարձակվի խոսքը սեռական հոլովի կազմության վրա և կբերվեն համապատասխան օրինակներ: Կտրվեն գոյականներ և կհանձնարարվի տեղաբաշխել աղյուսակում ըստ սեռականի *վերջավոր* և *անվերջավոր* ձևերի:

Ուղղական	**Սեռական**	**Հոլվիչ**
սեղան	սեղանի	ի
ամուսին	ամուսնու	ու
թոռ	թոռան	ան
քույր	քրոջ	ոջ

օր	օրվա	վա
վարդանանք	վարդանանց	ց
ուրախություն	ուրախության	ա
հայր	հոր	ո

Աշակերտների մոտ որոշակի դժվարություններ կլինեն հայցական, ուղղական և տրական հոլովները տարբերակելիս,որովհետև այս հոլովները ձևով նման են: Տարբերակելը հեշտ կլինի, եթե լավ հասկանան յուրաքանչյուր հոլովի շարահյուսական կիրառությունը: Գրատախտակին կգրենք համապատասխան նախադասություններ և կբացատրենք յուրաքանչյուրի շարահյուսական դերը:

Քանի որ հայցական հոլովը յուրահատուկ ձև չունի, նման է կամ ուղղականին կամ տրականին: Պետք է բացատրել, որ հայցական հոլովը ուղղականի ձև է ունենում, եթե գոյականը իրանիշ է, նման է տրականին, եթե անձնանիշ է: Կբացատրվի, որ այս նմանությունը ձևական է, իսկ շարահյուսական դերով դրանք միանգամայն տարբեր են:

Օր. *<u>Հացը</u> համեղ է: (ուղղական)*

Մայրս թխեց <u>հացը</u>: (հայցական)

Ուսուցիչը մոտեցավ աշակերտին: (տրական)

Ուսուցիչը գովեց աշակերտին: (հայցական)

Գոյականի հոլովումը թեմայի վերջում կտրվեն ամփոփիչ ստուգողական հարցեր և առաջադրանքներ, որոնք ավելի կամրապնդեն ստացած գիտելիքները: Օր.՝ նախապես ընտրած բնագրից դուրս գրել գոյականները և գրել յուրաքանչյուրի հոլովը:

Կտրվեն տարբեր հոլովման ենթարկվող մի քանի բառեր և կհանձնարարվի առանձին -առանձին հոլովել և ամեն մի հոլովով կազմել նախադասություններ:

Գոյական խոսքի մասի վերջում աղյուսակ է տրվում, որը ներկայացնում է գոյականի քերականական կարգերը: Աշակերտներին կհանձնարարվի, որ աղյուսակը իրենց տետրում գծեն և կրկնեն: Որպեսզի համոզվեմնք որ *գոյական* խոսքի մասը լավ են ընկալել թե ոչ, մեկ անգամ ևս կանդրադառնանք հարցերի. Ո՞ր հոլովը դժվար յուրացրիք և ինչու՞ և այլն:

Վերջում կանդրադառնանք նախադասության ձևաբանական վերլուծությանը: Օր.՝ *դուրս գրել տրված նախադասության գոյականները և գրել դրանց*

*առանձնահատկությունները. Նշել տեսակը, իրը, անձը, թիվը, առումը, հոլովը և հոլովիչը: Հատկապես կշեշտեմ, որ բոլոր հոլովումների հոգնակիները ենթարկվում են **ի** հոլովման:*

Գոյականի կազմությունը

Գոյականի ուսուցման մեջ կարևոր է նաև գոյականի կազմությունը, որի համար դասաժամ նախատեսված է : Դա առանձին դժվարություն չի ներկայացնում քանի որ *բառակազմություն* բաժինը երեխաները ուսումնասիրել են նախորդ դասարանում: Կտրվեն ածանցներ, որ սովորած ձևով յուրաքանչյուրից մի քանի օրինակ գրեն:

Այսպես. ություն-քաջություն, լայնություն……

վածք- գործվածք, կտրվածք……

Եզրակացություն

Ուսումնասիրելով գոյականի ուսուցման ձևերն ու մեթոդները՝ եկա այն եզրակացության, որ *գոյական խոսքի մասը* դասավանդելիս բավական չէ, որ աշակերտները անգիր անեն գոյականի սահմանումները և իմանան տերմինները եզրույթները: Շատ կարևոր է, որ մանկավարժը ոչ միայն տեսականորեն նյութը մատուցի, այլև կիրառի այնպիսի մեթոդներ, որ աշակերտները հեշտ և արագ ընկալեն նյութը:

Աշակերտները պետք է տարբեր ձևերով (աղյուսակներ, առաջադրանքներ, հարց ու պատասխան և այլն) ճանաչեն գոյականները, որ ցանկացած տեքստի մեջ հանդիպելիս կարողանան անմիջապես ջոկել և տարբերել մյուս խոսքի մասերից: Լավ իմանան նրա քերականական առանձնահատկությունները, որպեսզի ձևաբանական և շարահյուսական վերլուծության ժամանակ նախադասության մեջ կարողանան որոշել նրա կատարած դերը:

Եկա նաև այն եզրակացության, որ խոսքի մասերի ուսուցումն սկսվում է *գոյականից,* որովհետև գոյականի ուսուցումը ձևաբանության հիմքն է կազմում և երեխաների համար ավելի մատչելի է, քան մյուս խոսքի մասերը:

Օգտագործված գրականության ցանկ

Փ.Գ.Մեյթիխանյան. Հայոց լեզու: 7-9 դասարաններ: Ուսուցչի ձեռնարկ/ Երևան, <<Աստղիկ գրատուն>>, 2011 թ.

Է.Բ. Աղայան, Հ. Խ. Բարսեղյան. Հայոց լեզու, Երևան, <<Լույս>>, 1994 թ.